**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

«Վայտ Սթոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատի տրավերտինների հանքավայրի Արևմտյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսման

**Ավշար** **17.07.2026 թ.**

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (21.06.2014 թ. ՀՕ-110-Ն, խմբագրված 2023 թ.), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014 թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի (որոշումը խմբագրվել է 28.12.2023 թիվ 2343-Ն որոշում) 2026 թվականի հուլիսի 17-ին՝ ժամը 14:30-ին, Արարատի մարզի Ավշար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացավ «Վայտ Սթոն» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Արարատի մարզի Արարատի տրավերտինների հանքավայրի Արևմտյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային երկրորդ լսումը, որը օրենքով սահմանված կարգով ներկայացրեց ՇՄՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանը:

Հարությունյանը ներկայացրեց Նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ՇՄՆ և շահագրգիռ այլ կառույցների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, լրամշակման ներկայացման օրենսդրական ընթացակարգերը, նախատեսվող գործունեության շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա սպասվող հիմնական ազդեցությունները: Ներկայացրեց, որ օրենքով սահմանված կարգով լսման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է զանգվածային լրատվամիջոցներում և ուղարկվել է համայնքին՝ բնակչության շրջանում իրազեկում իրկանացնելու նպատակով:

Ընկերության բնապահպանական խորհրդատուն մանրամասն ներկայացրեց ՇՄԱԳ հաշավետությունում ներառված շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության շրջանակները, ազդեցության գնահատումները և դրանց բացառման կամ գոնե նվազագույնի հասցման բոլոր ՀՀ –ում գործող օրենսդրությամբ սահմանված միջոցառումները:

Բացի դրանից, ներկայացրեց նաև մշտադիտարկումների ծրագիրը և դրա նպատակը, համայնքի համար նախատեսվող սոցիալական ծրագրերը:

Համայնքի ղեկավարը կարևորեց համայնքին հատկացվող սոցիալական աջակցությունը, ճանապարհների բարեկարգումը և նշեց, որ գործունեությունը օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու դեպքում համայնքը առարկություններ չունի: Նա հաջողություն մաղթեց նախաձեռնողին և հույս հայտնեց, որ արդյունավետ համագործակցություն կունենան:

Բնակիչների կողմից հարցեր չհնչեցին:

Հանրային լսումն անցավ արդյունավետ քննարկման մթնոլորտում, ներկաները ողջունեցին նախատեսվող գործունեությանը:

Հանրային լսմանը մասնակցում էին Արարատ համայնքի ղեկավարը, համայնքապետարանի և գյուղապետարանի աշխատակիցները, ընկերության տնօրենը, նախաձեռնող ընկերության բնապահպանական խորհրդատուն և ազդակիր բնակավայրի բնակիչներ:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

Վարող և լսման պատասխանատու՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Ք. Հարությունյան

«Վայտ Սթոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Զուռնաչյան